

«Մխիթար Մեքաստացի» կրթահամալիր
2015թ.

Մայրենի լեզու, 4-րդ դասարան
4-րդ տարբերակ

Առաջին մաս: Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր տրված հարցերին:

Մի անգամ առավոտյան Ջելսումինոն գնաց պարտեզ ու տեսավ՝ բոլոր տանձերը հասել են: Տանձերը, ախր, միշտ այդպես են անում. ոչ ոքի ոչինչ չեն ասում, բայց իրենց համար հասնում են, և մի գեղեցիկ օր էլ տեսնում ես՝ արդեն հասել են, ու եկել է քաղելու ժամանակը: «Ափսոս, որ սանդուղք չեմ վերցրել հետս,- մտածեց Ջելսումինոն:- Արի գնամ, տանից սանդուղք բերեմ ու մի հատ էլ երկար ձող՝ վերևի ճյուղերից տանձը թափ տալու համար»: Ճիշտ է, տանից բավականին հեռու էր, բայց հո չէ՞ր թողնելու տանձերը հիմա էլ իրենց-իրենց թափվեն: Բայց այդ պահին նրա գլխում մի ուրիշ, քմահաճ միտք ծագեց. «Իսկ եթե օգտվեմ իմ ձայնի՞ց. սանդուղքով ով ասես՝ կքաղի»: Եվ, այսպես որոշելով, նա կանգնեց ծառի տակ ու ոչ կատակ, ոչ լուրջ **ճչավ**.

- Է՛յ, տանձեր, հապա մի ցա՛ծ թափվեք:

- Թը՛ փ-թը՛ փ-թը՛ փ,- պատասխանեցին տանձերը՝ անձրևի նման ցած թափվելով:

Ջելսումինոն **մոտենալ** մյուս ծառին և նույնը կրկնեց: Ամեն անգամ, երբ նա գոռում էր «թափվե՛ք», տանձերը ճյուղերից այնպես էին պոկվում, կարծես հենց դրան էին սպասում:

Ջելսումինոն շատ ուրախ էր. գործը թափով առաջ էր գնում: «Այսպես ես ահագին ուժ կլինայեմ,- խորհում էր նա,- ափսոս, որ առաջ գլխի չէի ընկել»: Բայց մտքերն էլ այդպիսին են, գալիս են՝ երբ խելքներին փչի:

Մինչ Ջելսումինոն շրջում էր իր պարտեզում ու այդ ձևով հավաքում տանձերը, հարևան արտում քաղհան անող մի գյուղացի տեսավ նրան: Մի երկու բույս նայեց, որ հասկանա՝ Ջելսումինոն ինչ է անում: Նա **տրորել** աչքերը, քիթը կամթեց և, երբ **համոզվեց**, որ տեսածը երազ չէ, վազեց կնոջ մոտ.

- Գնա, մի տես՝ ինչ է կատարվում,- դողալով ասաց նա կնոջը,- ես համոզված եմ, որ Ջելսումինոն չար վիհուկ է:

- Ի՛նչ ես ասում. նա բարի, սուր **ոգի** է:

Մինչ այդ ամուսինները բավական խաղաղ էին ապրել, բայց այստեղ նրանք կպան իրար:

Հանկարծ ամուսնու գլխում մի միտք ծագեց. «Արի հարևաններին կանչենք: Թող նրանք էլ նայեն Ջելսումինոյին, տեսնենք՝ ի՞նչ կասեն»:

Հարևաններին կանչելու միտքը դուր եկավ կնոջը: Նա դեմ չէր, որ մի ավելորդ **անգամ** շաղակրատելու հնարավորություն ստանա, դրա համար էլ մի ակնթարթում անհետացավ:

Դեռ արևը մայր չէր մտել երբ ամբողջ շրջակայքն իմացավ պատահածի մասին: Գյուղի

բնակիչները բաժանվել էին երկու մասի: Մի մասը համառորեն **պնդել**, թե Ջելսումինոն բարի ոգի է, իսկ մյուսները վստահորեն ապացուցում էին, թե նա չար կախարդ է: Ջելսումինոն լսում էր ու ծիծաղում:

1. Տեքստում գտի՛ր Ջելսումինոյին *բնութագրող արտահայտություններ* և դրանք շեղատառ դարձրո՛ւ:
2. Տեքստից գտի՛ր և այստեղ պատճենի՛ր այն հատվածը, որտեղ ասվում է, թե ինչ միտք ծագեց Ջելսումինոյի գլխում:
3.
 - 3.1 Ո՞րն էր Ջելսումինոյի հիմնական նպատակը. ճիշտ պատասխանը ներկյի՛ր որևէ

գույնով.

- ա) ահագին ուժ խնայելը
- բ) բարձր ձայն ունենալը
- գ) ճյուղերից տանձեր թափելը
- դ) սանդուղք բերելը:

3.2 Ինչո՞ւ հարևաններին կանչելու միտքը դուր եկավ գյուղացու կնոջը:

- 4. Ինչո՞ւ էր բնակիչների մի մասը Ջելսումինոյի համարում չար վիուկ, մյուս մասը՝ բարի ոգի. ճիշտ պատասխանը ներկի՞ր որևէ գույնով.
 - ա) ծառից ձայնով տանձ պոկելը չար վիուկի գործ է
 - բ) միայն բարի ոգին կարող է ծառից ձայնով տանձ պոկել
 - գ) մարդիկ տարբեր են, տարբեր բաների են հավատում, տարբեր կերպ են հասկանում ու բացատրում երևույթները
 - դ) մարդիկ չեն ուզում հավատալ, որ իրենց նման մարդը կարող է հրաշք գործել:
- 5. Պատասխանի՞ր՝ ինչո՞ւ էր Ջելսումինոյի հարևանը կսմթում քիթն ու տրորում աչքերը:
- 6. Տեքստում դեղին նշված չորս բայերը ուղիղ ձևով են, համապատասխանեցրո՞ւ նախադասությանը:
- 7. Տեքստից դո՞ւրս գրիր ուրիշի ուղղակի խոսքով մեկ նախադասություն:

Երկրորդ մաս: Կատարի՞ր տրված առաջադրանքները:

- 8. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառի փոխարեն կանաչ ներկած գծիկ է դրված: Լրացրո՞ւ բաց թողած տառերը՝ չփոխելով գույնը:
- 9. Տեքստում կարմիր գրված նախադասության ենթական ընդգծի՞ր:
- 10. Տեքստում կապույտ գրված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան: Դի՞ր բաց թողնված կետադրական նշանը:
- 11. Ո՞ր բառի իմաստն է՝ «իրար կպան»։ Ճիշտ պատասխանն ընդգծի՞ր.
 - ա) գրկախառնվեցին
 - բ) հասցրին
 - գ) վիճեցին
 - դ) հասկացան
- 12. Տրված բառերից որի՞ ղիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության: Մխալ տարբերակն ընդգծի՞ր.
 - ա) ճյուղ – ածանցավոր
 - բ) ավելորդ- ածանցավոր
 - գ) հնարավորություն- ածանցավոր
 - դ) պարտեզ–պարզ
- 13. Տրված բառերից յուրաքանչյուրի ղիմաց գրված է հականիշը: Մխալ գույզը կարմիր ներկի՞ր.
 - ա) հասած – խակ
 - բ) լուրջ – կատակով
 - գ) բարի – ոգի
 - դ) բաժանվել - միավորվել
- 14. Փակագծերում տրված բառերը ձևափոխելով՝ տեղադրի՞ր բաց թողած տեղերում: (սանդուղք, գլուխ)
.... ամեն մեկն էլ միրգ կքաղի, բայց Ջելսումինոն ... ընկավ, որ ուրիշ գործիք կարող է փորձել: